



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

հունվարի 2018 թվականի №Ա
քաղ. Երևան

**«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ՓՄԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԵՆՔԻ ՄՊԱՌՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի դեկտեմբերի 13-ի №08/56 գրությունը, համաձայն որի՝ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող SCADA/EMS կարգավարական կառավարման ու տվյալների հավաքագրման՝ էներգիայի կառավարման համակարգի արդիականացմամբ, ծրագրի շրջանակում նախատեսվում է պահուստային կարգավարական կենտրոնի շենքի կառուցում և էլեկտրասնուցում, որն իրականացվելու է գլխավոր կապալառուի կողմից,

բ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հունվարի 17-ի №04ԴԳ02/85 գրությունը՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության պահուստային կարգավարական կենտրոնի շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով միացումն իրականացնելու առնչությամբ առարկություն չունենալու վերաբերյալ,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող SCADA/EMS կարգավարական կառավարման ու

տվյալների հավաքագրման՝ էներգիայի կառավարման համակարգի արդիականացմամբ, ծրագրի շրջանակում նախատեսված պահուստային կարգավարական կենտրոնի շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվում է էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 14.4-րդ կետով սահմանված կարգով տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ առանց միացման վճարի գանձման:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերություններին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
հունվարի 2018թ.